

Եւ խիտ երկար թարթիչներն իր կը նմանին  
 Աղաւնեակի մը թելերուն ըսպիտակ.  
 Ի՛նչ փոյթ թէ ան, ա՛հ չըտեսաւ կոյս գարնան  
 Լուսակարկաջ աղբիւրներուն մէջ ժըպտիլն,  
 Եւ չըբամեց դեռ խաղողի ողկոյզներ  
 Բաժակին մէջ բիրեղեայ.  
 Կամ չըխառնեց գանգուրներն իր ասպետի  
 Բըլուրներուն վրայ պարող  
 Աղջիկներուն հողմատարիկ վարսերուն:  
 Ո՛հ, ի՛նչ փոյթ կեանքը մեռնող,  
 Երբոր երազը կ'ապրի,  
 Երբոր երազն անմա՛հ է:

Մուրճը ձեռքին մէջ բանաստեղծն յաղթական  
 Արձանին խիստ աչքերուն մէջ կը յառի.  
 Եւ անոնց մէջ կը ճանչնայ  
 Ինքզի՛նք, ամբողջ անթերի:  
 Կը ճանչնայ սուրբ մարմարիոնն այն՝ որ առաւ  
 Բազկին տակ կեանք, որ այդտեղ  
 Եկաւ զանգուած մ'իր բըրտութեան մէջ նընջող  
 Եւ արթընցաւ Դիցուհի՛.  
 Չերթ քարափերթ մ'ըստրուկ ինկաւ մուրճին տակ,  
 Եւ կանգնեցաւ Վրիժուհի՛:

Աւարտած էր ամէն գործ.  
 Ահա մէջտեղն էր, Նեմեսիսը, կանգուն,  
 Պաշտըւելու, ընդունելու ողջակեզ  
 Այլեւս կա՛զմ եւ պատրաստ:  
 Այն ժամանակ քերթողն ուրախ, գոհունակ,  
 Քաշեց նիզերը, բացաւ